



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք  
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2024 թվականի N 235-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գագիկ Գերասիմի Մինասյանը /ՀՀ, Շիրակի մարզ, Աշոցք, գ. Սալուտ, 4-րդ փողոց, տուն 11, AV0603735/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի հունիսի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

#### 2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սալուտ բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Գագիկ Գերասիմի Մինասյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0060/ 0,1 հա խոտհարքի համար,

2) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0152/ 0,13 հա խոտհարքի համար,

3) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0063/ 0,51 հա անջրդի վարելահողի համար,

4) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0107-0005/ 0,04 հա խոտհարքի համար,

5) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0032/ 0,43 հա անջրդի վարելահողի համար,

6) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0107-0034/ 0,32 հա անջրդի վարելողի համար,

7) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0109-0057/ 0,71 հա անջրդի վարելահողի համար,

8) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0191/ 0,11 հա խոտհարքի համար,

9) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0167/ 0,21 հա անջրդի վարելահողի համար,

10) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0013/ 0,37 հա անջրդի վարելահողի համար,

11) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0003-0020/ 0,17 հա բնակելի կառուցապատման հողի համար,

12) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0108-0023/ 0,17 հա խոտհարքի համար,

13) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0128/ 0,61 հա անջրդի վարելահողի համար,

14) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0101-0171/ 0,56 հա անջրդի վարելահողի համար,

15) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0109-0056/ 0,07 հա բնակելի կառուցապատման հողի համար,

16) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0001-0025/ 0,2 հա բնակելի կառուցապատման հողի համար,

17) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0001-0026/ 0,086 հա բնակելի կառուցապատման հողի համար,

18) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0108-0046/ 0,58 հա անջրդի վարելահողի համար,

19) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0109-0075/ 0,05 հա խոտհարքի համար,

20) գ. Սալուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-099-0001-0038/ 0,378 հա բնակելի կառուցապատման հողի համար,

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառքը՝ 53 795 ՀՀ դրամ, տույժ՝ 67 146 ՀՀ դրամ, վճարման ենթակա՝ 120 941 ՀՀ դրամ, 2021-2024 թվականներին՝ ապառք՝ 49 220 ՀՀ դրամ, տույժ՝ 7613 ՀՀ դրամ, ենթակա վճարման՝ 56 833 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 177 774 ՀՀ դրամ պարտք:

Գագիկ Գերասիմի Մինասյանը պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները: